



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱԿԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի

Հայրավանք համայնք, հասցե Բարի գալուստի 17, հեռ. /094/ 47-17-10, էլ. փոստ. hayravanq.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» Հունվարի 2018թ. N 4 - Ն

ՀԱՅՐԱԿԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածի դրույթներով

1. Հաստատել Հայրավանք համայնքի 2018թ. բյուջեն
ա/ եկամուտների գծով՝ 21059.8 հազ. դրամ
բ/ ծախսերի գծով՝ 25271.4 հազ. դրամ
գ/ հավելուրդը կամ դեֆիցիտը / պակասուրդը/՝ 4.211.6 հազ. դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի.
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի.
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի.
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը / պակասուրդը/՝՝ համաձայն հատված 4-ի.
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի.

Վարչական բյուջեի 2018թ. տարեսկզբի ազատ մնացորդի միջոցները կազմում են 3.095.2 հազ. ՀՀ դրամ, իսկ ֆոնդային բյուջեի 2018թ. տարեսկզբի մնացորդը՝ 1.116.4 հազ. ՀՀ դրամ, ընդամենը՝ 4.211.6 հազ. դրամ, որից 500.0 հազ. դրամ գումարը ուղղել գործառնական դասակարգմամբ 01 բաժնի 01 խմբի 01 դասի 5122 տնտեսագիտական հոդվածին , որպես վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսեր, 500.0 հազ. դրամը ուղղել գործառնական դասակարգմամբ 01 բաժնի 01 խմբի 01 դասի 5113 տնտեսագիտական հոդվածին, որպես շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում , 200.0 հազ. դրամը ուղղել գործառնական դասակարգմամբ 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5134 տնտեսագիտական հոդվածին, որպես նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման վճար, 3011.6 հազ. դրամը ուղղել գործառնական դասակարգմամբ 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112 տնտեսագիտական հոդվածին, որպես շենքերի և շինությունների շինարարության վճար:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի.
8. Սահմանել վարչական բյուջեի պահուստային ֆոնդը՝ 1.955.8 /մեկ միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր / դրամ:

9 «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն

ա/ թույլատրել համայնքի ղեկավարին կատարել բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբախշումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

բ/ Սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբախշումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15%:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փորձաքննություն անցնելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ(4)

Դեմ ()

Ձեռնպահ ()

ՄԵՐՈՒԺԱՆ ԲԱՂՈՅԱՆ



ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ



ԱՐՄԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ԱՐԵՎԺԱՏ ՕՀԱՆՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՀԱՄԲԱՂՁՈՒՄՅԱՆ